Պատմություն և մշակույթ 2025 № 22 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.304

History as a Process of Formation and Comprehension of American Identity

Reflections on Tigran Yepremian's university textbook "History of the United States of America"

Albert Stepanyan
https://orcid.org/0009-0000-0943-3142
YSU, Doctor of Sciences in History
bertstepanyan48@gmail.com

Smbat Hovhannisyan
https://orcid.org/0009-0000-0943-3142
YSU, Associate Professor at the Chair of World History, Ph.D in History
smbat_hovhannisyan@ysu.am; shovhannisyan@aua.am

Karen Gasparyan
YSU, Associate Professor at the Chair of World History, Ph.D in History
karengasparyan@ysu.am

Keywords: History of the USA, Auto Isolation, Imperialism, Melting Pot, Identity, Historiography, Self-consciousness, Crisis.

The article examines Tigran Yepremian's university textbook "History of the United States of America," analyzing it from both research and pedagogical perspectives. The authors present the fundamental methodological approaches of the textbook, emphasizing its interdisciplinary methodology, the study of American identity paradigms, the examination of crises as catalysts for development, and the analysis of state institutional functions. Besides these institutional issues, the textbook discusses the historical development of the principal elements of American national identity – science and technology, culture and religion, social psychology and civil liberties based on modern humanities. In this view, the problems of American elite groups, various social movements, and outstanding personalities are carefully interpreted in the textbook. The concern with the significant aspects of the history-teaching activity occupies a central position in Yepremian's textbook. It aims to develop a critical approach for students to the process of American history and its principal lessons to be learned and modeled as the important issues of training in history and humanities. All the said highlight the significance of Yepremian's textbook for students and the general public.

Պատմությունը որպես ամերիկյան ինքնության ձեվավորման և վերաիմաստավորման գործընթաց

Մտորումներ Տիգրան Եփրեմյանի «ԱՄՆ պատմություն» բուհական դասագրքի առթիվ

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 304- 314

Received: 15.06.2025
Revised: 13.08.2025
Accepted: 18.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Ալբերտ Ստեփանյան
ԵՊՀ, Պատմ. գիտ. դոկտոր

Սմբատ Հովհաննիսյան
ԵՊՀ, Պատմ. գիտ. թեկնածու

Կարեն Գասպարյան
ԵՊՀ, Պատմ. գիտ. թեկնածու

Հիմնաբառեր՝ ԱՄՆ պատմություն, ինքնամեկուսացում, կայսերականություն, ձուլման կաթսա, ինքնություն, պատմագիտություն, ինքնագիտակցություն, ճգնաժամ:

Հոդվածը քննարկում է Տիգրան Եփրեմյանի «ԱՄՆ պատմություն» բուհական դասագիրքը՝ վերլուծելով այն թե՛ հետազոտական, թե՛ մանկավարժական տեսանկյուններից: Հեղինակները ներկայացնում են դասագրքի մեթոդաբանական հիմնարար մոտեցումները, ընդգծելով միջգիտակարգային մեթոդաբանությունը, ամերիկյան ինքնության հարացույցների ուսումնասիրությունը, ճգնաժամերի դիտարկումը որպես զարգացման խթաններ և պետական կառույցների գործառույթների վերլուծությունը:

Բացի այս հաստատութային [ինստիտուցիոնալ] հարցերից, դասագիրքը քննարկում է ամերիկյան ազգային ինքնության հիմնական տարրերի պատմական զարգացումը՝ գիտություն և տեխնոլոգիա, մշակույթ և կրոն, սոցիալական հոգեբանություն և քաղաքացիական ազատություններ՝ հիմնված ժամանակակից հումանիտար գիտությունների վրա: Այս տեսանկյունից, ամերիկյան էլիտար խմբերի, տարբեր սոցիալական շարժումների և ականավոր անձնավորությունների գործունեությունը մանրակրկիտ վերլուծված և մեկնաբանված է դասագրքում: Պատմության դասավանդման գործունեության կարևոր ասպեկտների հանդեպ մտահոգությունը կենտրոնական տեղ է գրավում Եփրեմյանի դասագրքում: Այն նպատակ ունի զարգացնել ուսանողների քննադատական մոտեցումը ամերիկյան պատմության ընթացքի և դրա հիմնական դասերի նկատմամբ, որոնք պետք է յուրացվեն և մոդելավորվեն որպես պատմության և հումանիտար գիտությունների ուսուցման կարևոր խնդիրներ: Այս ամենը ընդգծում է Եփրեմյանի դասագրքի կարևորությունը ուսանողների և լայն հասարակության համար:

История как процесс формирования и осмысления американской идентичности
Размышления об университетском учебнике Тиграна Епремяна «История Соединённых Штатов Америки»

Альберт Степанян
ЕГУ, доктор ист. наук

Смбат Оганнисян
ЕГУ, доцент кафедры Всемирной истории, кандидат исторических наук

Карен Гаспарян
ЕГУ, доцент кафедры Всемирной истории, кандидат исторических наук

Ключевые слова: история США, самоизоляция, империализм, плавильный котёл, идентичность, историография, самосознание, кризис.

В статье рассматривается университетский учебник Тиграна Епремяна «История Соединенных Штатов Америки», анализируя его как с исследовательской, так и с педагогической точек зрения. Авторы представляют фундаментальные методологические подходы учебника, подчеркивая междисциплинарную методологию, изучение парадигм американской идентичности, рассмотрение кризисов как катализаторов развития и анализ функций государственных институтов.

Помимо институциональных вопросов, учебник рассматривает историческое развитие основных элементов американской национальной идентичности – науки и технологий, культуры и религии, социальной психологии и гражданских свобод, основанных на достижениях современных гуманитарных наук. В этом контексте в учебнике подробно анализируются вопросы, касающиеся американских элитных групп, различных социальных движений и выдающихся личностей.

Особое внимание уделено значимым аспектам преподавания истории, что занимает центральное место в учебнике Епремяна. Его цель – развить у студентов критический подход к процессу осмысления американской истории и её основным урокам, которые могут быть изучены и смоделированы как важные вопросы обучения в области истории и гуманитарных наук. Всё это подчёркивает ключевое значение учебника Епремяна для студентов и широкой общественности.

* * *

Ներածություն։ Արդի տեսաբաններից մեկի ձևակերպմամբ՝ պատմության գիտակարգն իր իմաստաբանական ընդգրկմամբ ո՛չ «ինքնին անցյալի», ո՛չ էլ «պատմագետի մտքի» մասին չէ, այլ դրանց համադրելիության [Certeau, 1988, էջ 45]։ Հուսկ ըմբռնում. պատմական գիտելիքը ենթադրում է անընդհատ մոտեցում «անցյալի բնորդին»։ Եվ այդ հոլովույթը վերջ չունի։ Ասվածը պատմության հետազոտական դիտանկյան մասին է։ Սակայն գիտակարգի այլ ժանրեր գալիս են փաստելու, որ սահմանները թափանցիկ են և նույնպես կարող են ընդգրկվել նշված իմացաբանական շարժի մեջ՝ հարկավ, պահպանելով իրենց առանձնահատկությունները։ Ասվածը, կարծում ենք, լիովին վերաբերում է ներկայացվող դասագրքին [Եփրեմյան, 2024, 544 էջ]։

Դիտարկենք այն թե՛ **հետազոտական,** թե՛ **մանկավարժական** տեսանկյուններից։ Հավելենք, որ խորքային առումով դրանք փոխլրացնում են միմյանց, զի առաջնորդում են ընթերցողին նկարագրությունից, մեկնությունից դեպի հասկացում՝ պատմական դեպքերի և դեմքերի, իրադարձությունների և իրադրությունների, դարաշրջանների և քաղաքակրթական համալիրների, համակեցական հիմնարկների և գաղափարախոսությունների [Lee P., 2004, էջ 129-164]։

1. ԱՄՆ պատմության ուսումնասիրման մեթոդաբանական առանձնահատկությունները։ Պատմական հետազոտության արժեքը պայմանավորված է ոչ միայն փաստական նյութի հարստությամբ, այլև դրա վերլուծության մեթոդաբանական հիմքերով։ Տիգրան Եփրեմյանի ներկայացվող դասագրքի պատմական բնորդը Ամերիկայի Միացյալ Նահանգներն է՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը։ Այս լույսով ցանկանում ենք հատկագծել դասագրքի հետևյալ հիմնարար մոտեցումները։

Առաջին. առաջադրված հիմնախնդիրը բացահայտվում է միջգիտակարգային մեթոդաբանությամբ՝ հարադրելով պատմության, ընկերաբանության, քաղաքագիտության, իմաստասիրության, հասարակական հոգեբանության և այլ բնագավառների տվյալները: Այս մոտեցումը, որ ներառում է տարբեր գիտական դաշտերի համակցված վերլուծություն, նպաստում է բազմաշերտ ու համապարփակ պատկերների ստեղծմանը, որտեղ յուրաքանչյուր գիտակարգ լրացնում է մյուսին: Անհրաժեշտության դեպքում կիրառվում են գիտական մեթոդներ, տեսություններ և տվյալներ՝ ապահովելով առաջադրված հարցերի նկատմամբ ամբողջական մոտեցում և վերլուծական խորություն: Այսու՝ պատմական երևույթները դիտարկվում են ոչ միայն որպես մեկուսացված փաստեր, այլև որպես հասարակական, մշակութային և սոցիալական համատեքստում ընդգրկված գործընթացներ:

Երկրորդ. պատմությունը դիտարկվում է ամերիկյան ինքնության հարացույցների հերթագայության հետնախորքի վրա: Ընդսմին, այդ հարացույցներն ունեն լայն ընդգրկում՝ սկսյալ արտադրական նորարարություններից մինչև ազգաշինական ծրագրեր, պետական կառույցներից մինչև կրոնական, մշակութային և կրթական համալիրներ: Ամերիկյան ինքնությունը դիտարկվում է որպես դինամիկ պատմական գործընթաց, որի շրջանակներում կարևորվում են ոչ միայն ներքին հարաբերությունները, այլև միջազգային ազդեցությունները, որոնք ազդել են այդ ինքնության ձևավորման ու վերարտադրության վրա: Այս համատեքստում ամերիկյան ինքնության տարրերը դիտարկվում են որպես պատմական գործընթացների արդյունք, որոնք մի կողմից կապված են արտադրական նորարարությունների և պետական կառույցների ձևավորման հետ, մյուս կողմից՝ կրոնական, մշակութային և կրթական համալիրների բարդ փոխազդեցության [Huntington, 2004]:

Երրորդ. հատուկ ուշադրություն է դարձվում ճգնաժամերին: Դրանք դիտարկվում են իբրև զարգացման հնարավոր խթաններ, որոնց ազդեցությամբ հասարակությունը (չնայած որոշակի հետընթացին) հնարավորություն է ստանում սթափ ինքնագնահատության և ներունակ ծրագրերի ու տեխնոլոգիաների մշակմամբ դուրս գալու զարգացման նոր մակարդակ: Ասվածն առաջին հերթին վերաբերում է տնտեսական ճգնաժամերին, որոնք ԱՄՆ-ում կրկնվում էին որոշակի հաջորդականացմամբ:

Չորրորդ. ասվածից բխում է ամերիկյան պատմության մեկ այլ առանձնահատկություն. այն ագուցված է հանրային կարևորության գերխնդիրների շուրջ, որոնց լուծումը պահանջում է սերունդների շարունակական, նպատակամետ և ստեղծագործ ջանքեր: Իբրև ասվածի լավագույն դրսևորում՝ սովորաբար բերվում է վայրի արևմուտքի յուրացման գաղընթացը, որն էականորեն կերպափոխեց ամերիկյան ազգային ինքնությունը:

Հինգերորդ. սևեռումի առարկա են ԱՄՆ պետական կառույցը՝ ինչպես տեղական, այնպես էլ համադաշնային մակարդակներում, և դրանց փոխլրացման գործառույթները գործադիր, օրենսդրական, դատական ոլորտներում: Հատկանշվում է յուրաքանչյուրի ինքնակա-ինքնաբավ կարգավիճակը՝ ընդհանրական **զսպումների** և **հավասարակշռությունների** (checks and balances) մեխանիզմի ներքո:

Վեցերորդ. մանրամասն ներկայացված են ԱՄՆ արտաքին քաղաքականության վեկտորները՝ սկսյալ **ինքնամեկուսացումից** [**isolationism**] մինչև **կայսերականություն** [**imperialism**]: Արդյունքում պետությունը վերածվեց աշխարհաքաղաքական և ուժային կարևոր բևեռի, որը

միավորում է **տեխնոլոգիական** և **ժողովրդավարական** Արևմուտքը։ Դասագրքում մանրամասն ներկայացված են այս կերպափոխություններն իմաստավորող և հիմնավորող տեսությունները։

Յոթերորդ. ամերիկյան կյանքում առանձնակի կարևորվում է էլիտայի (ընտրախավ) նշանակությունը՝ քաղաքական, մշակութային, կրոնական, տեխնիկական։ Այն հարիր պատասխաններ է մշակում առկա և սպասելիք մարտահրավերներին։ Ի մասնավորի՝ նրա տարբեր խմբերի առաջնորդությամբ ներգաղթյալների նորանոր սերունդները ներգրավվում են ամերիկյան կյանքի մեջ, որն ընդդիմախոսները հաճախ բնութագրում են իբրև **ձուլման կաթսա (melting pot)**։

Ութերորդ. համակողմանի լուսաբանվում է քաղաքացիական ազատությունների ամերիկյան համալիրն իր պատմական ընթացքի մեջ, երբ աստիճանաբար հաղթահարվում են էթնիկ-ռասայական, կրոնական, քաղաքական և մշակութային անջրպետները։ Գործընթաց, որ տևեց շուրջ երկու հարյուր տարի՝ ուղեկցվելով քաղաքական առճակատումներով, արյունահեղ ընդհարումներով, սպանություններով, նաև՝ երկխոսությամբ և փոխզիջումներով։

Իններորդ. ամերիկյան պատմությունը լուսաբանվում է համազգային կուսակցությունների և հասարակական շարժումների ներազդեցությամբ։ Դրանք տարբեր են և հընթացս պատմության փոփոխվում են մասնակիորեն կամ էլ ընդհանրապես՝ նպատակներ, գաղափարաբանություն, ծրագրեր, գործելակերպ։ Ընդգրկում են հանրային կյանքի բոլոր էական հինահարցերը՝ աբոլյուցիոնիզմ, ռասայական խտրականություն, կրոնական հանդուրժողականություն, ընդհանուր ընտրական իրավունք, աշխատավորների իրավունքներ, կանանց իրավունքներ, երեխաների իրավունքներ, էթնիկ համայնքների իրավունքներ և այլն։ Հոլովույթի գագաթին երկու համազգային կուսակցություններն են՝ Հանրապետականները և Դեմոկրատները։ Չնայած անզիջում պայքարին՝ նրանք խոշոր հաշվով փոխլրացնում են միմյանց և նպաստում ամերիկյան առաջընթացին ըստ ժամանակի պահանջների։

Տասներորդ. դասագրքում կարևորվում է ԱՄՆ կրթական և գիտական համալիրը՝ կառույցը, գործառույթը, արդյունքները պատմական տարբեր ժամանակաշրջաններում։ Առանձնակի լուսաբանվում է նրա դերակատարությունը մեր օրերում (postindustrial age), երբ հասարակական արտադրության գերակա նպատակ են ճանաչվում գիտելիքը և (մտավոր ու նյութական) տեխնոլոգիաները։

Տասնմեկերորդ. այս դիտանկյունը բացահայտում է ամերիկյան հանրային կյանքի մեկ այլ դիտանկյուն, որն անհատակենտրոն չափույթ ունի։ Հիրավի, անհատական նախաձեռնությունը ամերիկյան կյանքի ամենակարևոր խթաններից է։ Նրա պատմությունն իր տարասեռ դրսևորումներով կարելի է ներկայացնել իբրև մի պատկերասրահ, որ պարառում է ականավոր գործիչներին՝ սկսյալ նախագահներից մինչև արդյունաբերողներ, գրողներից մինչև գյուտարարներ, գիտնականներից մինչև նկարիչներ և կինոգործիչներ։ Նրանք են հոգի տալիս պատմության **անկենդան ընթացքին՝** հավելելով նպատակներ և խորքային իմաստ։

Հարկավ, կարելի է առանձնացել քննարկվող դասագրքի իմաստային այլ կողմեր, սակայն աստ կանգ առնենք։ Հետազոտական աշխատանքի այս հանրագումարին աստ հավելվում է ուսումնակրթական չափույթը, որը տեքստին հաղորդում է երկխոսային երանգ։ Ընդսմին, վերջինիս երկրորդ բևեռը բուհական ուսանողն է, որին պետք է հաղորդել ոչ միայն կոնկրետ գիտելիքներ, այլև հմտություններ ու կարողություններ՝ մեկնաբանելու, տիպաբանելու և

հասկանալու անցյալը, ներկան և ուրվագծելու տեսանելի ապագայի ինչ-ինչ հատկագծեր: Նման գործառույթով **պատմանյութը** վերածվում է **գիտակրթական փաստի՝** պատմագիտական, քաղաքագիտական, ընկերաբանական և այլազան հանդերձանքներով:

Խնդրին հետամուտ՝ դասագրքում կիրարկվում են նյութի մատուցման արդի [ավանդական և նորագյուտ] մեթոդներ՝ պարզից բարդը, հայտնիից անհայտը, նկարագրությունից ըմբռնումը, եզականից ընդհանրականը: Նաև բազմաչափ պատմական ժամանակի, հանգրվանային ճշմարտության, անցյալի արժեբանական վերապրումի, տեքստաբանական փաստարկման այլևայլ ըմբռնումներ: Հատկանշելի է նաև սևեռուն ուշադրությունը պատմական կարևոր փաստաթղթերի նկատմամբ՝ հռչակագրեր, հրամանագրեր, օրենսդրական ակտեր, արխիվային նյութեր, հուշագրություններ, լուսանկարներ և այլն: Դրանց պատշաճ մատուցումը միտված է զարգացնելու ընթերցողի քննադատական վերաբերմունքը պատմական եղելույթի և գրույթի նկատմամբ: Ասվածն ուղենշում է այն ճանապարհը, որով հիշողությունը կերպափոխվում է պատմագիտական ըմբռնման: Իսկ դա պատմության դասավանդման կարևորագույն խնդիրն է: Ընդհանրացնելով ասվածը՝ կարող ենք արձանագրել, որ Տիգրան Եփրեմյանի տեքստը միտված է առաջնորդելու ընթերցողին ԱՄՆ պատմության այլազան շրջափուլերով և բացահայտելու վերջիններիս ամբողջական պատկերն ու դասը:

2. ԱՄՆ պատմության շրջափուլային զարգացումը: Արդ ցանկանում ենք փոքր-ինչ մասնավորեցնել այս գործընթացը: Դասագրքի ի մոտո դիտարկման պարագային ԱՄՆ պատմության մեջ ուրվագծվում են կարևոր շրջափուլերը, որոնք բնութագրում են նրան իբրև կենդանի օրգանիզմ իր կայացման բազմազան ու բարդ հոլովույթի ծիրում: Մենք այդ կայացման **առաջին շրջափուլը** տեսնում ենք հյուսիսամերիկյան տասներեք գաղութների համախմբման և ազգային ինքնագիտակցության մեջ: 18-րդ դարի 70-80-ականներին դա տեղիք տվեց հեղափոխության և ազատագրական պատերազմի ընդդեմ բրիտանական տիրապետության, որոնք պսակվեցին հաղթանակով: Այդ գործում հույժ կարևոր էր **հիմնադիր հայրերի** և նրանց մշակած կարևորագույն փաստաթղթերի՝ «Անկախության հռչակագրի» և «Սահմանադրության» դերը [Wood, 2011]; [Bailyn, 1992]:

Հարկավ, գործընթացը կատարյալ չէր, և տեղաշարժերն ուղեկցվում էին հակասություններով ու բացթողումներով՝ մարդու հիմնարար իրավունքներ և ստրկություն, ներգաղթյալներ և տեղաբնիկներ, պետական միասնություն և համադաշնություն: Շուտով դրանց պետք է գումարվեին համազգային հասարակական շարժումները և կուսակցությունները՝ Հանրապետական և Դեմոկրատական: Դրանց հարաբերությունները ժամանակ առ ժամանակ սրվում էին և պահանջում արմատական լուծումներ, և այդ գործում կարևորվում էին ականավոր պետական այրերի փորձն ու նախաձեռնությունը՝ Ջորջ Վաշինգթոն, Բենջամին Ֆրանկլին, Ջոն Ադամս, Թոմաս Ջեֆերսոն:

Ամերիկյան կայացման **երկրորդ շրջափուլը**, որը հստակ ուրվագծվում է դասագրքի հարուստ և բազմապիսի նյութերում, վերաբերում է պատմական մի ժամանակի, որը ձգվում էր Քաղաքացիական պատերազմից մինչև Առաջին աշխարհամարտը՝ 1862-1914 թվականներ: Շրջափուլը բնութագրվում է աննախադեպ առաջընթացով կյանքի ամենատարբեր ասպարեզներում: **Արտադրություն.** տեխնոլոգիաների և արտադրական կարողությունների զարգացում (մեկ միլիոն նորարական հայտագրերի ներդրում)՝ շոգեշարժիչից մինչև ներքին

այրման և էլեկտրական շարժիչներ, պողպատի լեգիրումից մինչև ալյումինի և քիմիական նյութերի արտադրություն, ընտանեկան սառնարաններից մինչև ավտոմեքենա, արագընթաց գնացք, ինքնաթիռ, տեղեկույթի հաղորդման մորզեի համակարգից մինչև ռադիո: **Սպառազինություն.** հեռահար հրետանուց մինչև ավտոմատ հրացան, գնդացիր, ուժանակ, ռազմական նավատորմի ստեղծում: **Արտադրության կազմակերպման նոր ձևեր.** կապիտալի աննախընթաց կենտրոնացում՝ սինդիկատների, թրաստների, կոնցեռնների, համազգային բանկերի ձևավորում: **Միջազգային ներգրավվածություն.** առաջին իրական քայլեր՝ հրաժարելու ներփակությունից և ինքնաբավությունից ու անցում կատարելու դեպի միլիտարիզմ և կայսերականություն: **Ընկերային ոլորտ.** ստրկության վերացում և դրան հետևած զանազան ազատական շարժումներ և կազմակերպություններ՝ բանվորական, սոցիալիստական, արհմիութենական, ռասայական հավասարության, գենդերային հավասարության, հակամոնոպոլիական, համընդհանուր ընտրական իրավունքի և այլն: **Կրթություն և գիտություն.** նախնական, բազային և ավագ դպրոցների համացանցերի ներդրում, բարձրագույն կրթության և գիտատեխնիկական համալիրների նորացում և զարգացում՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ, Հարվարդի, Ստենֆորդի, Նյու Յորքի, Յեյլի, Փրինսթոնի, Միչագանի և բազում այլ համալսարաններ: **Մշակույթ.** ազգային գրականության, թատրոնի, մամուլի զարգացումից մինչև թանգարան, գեղանկարչություն և կինոարվեստ:

Պետությունն իր գործունեությամբ ձգտում էր հավասարակշռել հանրային կյանքի վերոհիշյալ տարասեռությունները՝ միայն զսպելով դրանց ծայրահեղական դրսևորումները: Եվ աստ կարևոր էին ամերիկյան նախագահների ծրագրերը, կամքը և քաղաքական տակտը՝ Ուլիսես Ս. Գրանթ, Բենջամին Հարրիսոն, Թեոդոր Ռուզվելթ, Ուիլյամ Թաֆթ:

Կայացման **երրորդ շրջափուլը** պարառում էր ԱՄՆ պատմության 1914-1945 թվականները՝ երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածը: Ուսումնասիրողներն այն բնութագրում են իբրև խորագույն (ներքաղաքական և աշխարհաքաղաքական) ճգնաժամերի և աննախադեպ որոշումների կայացման և իրագործման միջավայր: Այս տարածք ԱՄՆ-ը ոտք դրեց իբրև համաշխարհային պատմության «կրավորական դերակատար» և դուրս եկավ իբրև Արևմուտքի առաջատար տերություն: Զարգացումը, սակայն, միջարկվեց 1928-1932 թվականների համընդահանուր ճգնաժամով և (հատկապես) Երկրորդ աշխարհամարտով:

Կրկին աչքի էր զարնում արտադրության և տեխնոլոգիաների թռիչքը՝ ճշգրիտ մեքենաշինություն և սարքաշինություն, սինթետիկ նյութեր և հեռակառավարում, համընդհանուր ռադիոցանց և հեռատեսիլ, երկաթուղային և ավտոճանապարհների համընդգրկուն ցանց, անդրծովյան առևտուր և կապիտալի արտահանում: Արդյունաբերության մեջ (ավտոշինություն, նավաշինություն, ինքնաթիռաշինություն) սկսեց ներդրվել ավտոմատացումը և հարահոսը [կոնվեյեր]:

Այս բոլոր գործընթացներում առանձնակի կարևորվում էր բանկերի դերը: Սակայն նրանց գործառույթներին սկսեցին վերագրել չհիմնավորված ինքնաբավություն: Եվ հընթացս ժամանակի խոշոր ճեղքվածք գոյացավ առկա դրամաքանակի և ապրանքային զանգվածի, արտադրության և սպառման, ժողովրդագրական իրավիճակի և աշխատատեղերի միջև: Բանկերում բռնկվեց ու արագ ծավալվեց աննախադեպ տնտեսական ճգնաժամ: Այն շուտով համաշխարհային ընդգրկում

ստացավ, քանզի ԱՄՆ տնտեսությունը բազում թելերով կապված է Արևմուտքի զարգացած տնտեսությունների հետ:

Տնտեսական ճգնաժամին շուտով հետևեց և աշխարհաքաղաքական ճգնաժամը, որը հանգեցրեց Երկրորդ աշխարհամարտին (1939-1945): Որքան էլ տարօրինակ հնչի, այս ճգնաժամին ԱՄՆ-ը ավելի պատրաստ եղավ, քանզի արդեն կար **առաջինի** հաղթահարման ընհանրական փորձառությունը: Աստ միանգամայն ընդունելի է այն միտքը, որ նման ծավալի ճգնաժամերի հաղթահարումը զուտ ավանդական ժողովրդավարական միջոցներով հույժ խնդրարկելի է:

Ասվածը լիովին հաստատվում է ԱՄՆ 26-րդ նախագահ Ֆրենսիս Դ. Ռուզվելթի գործունեությամբ, որն այս պաշտոնում ընտրվել է չորս անգամ (1933-1945 թթ.): Բայց դա սահմանադրության միակ խախտումը չէր. նրա նախաձեռնությամբ պետությունը սկսեց ակտիվ միջամտել ինչպես տնտեսական, այնպես էլ հանրային կյանքին: Փակվեցին բազում անհեռանկար բանկեր և արտադրական միավորումներ: Պահուստային ֆոնդի հաշվին սկսեցին սուբսիդավորվել դրանցից միայն կենսունակները: Գործազրկությունը մեղմելու նպատակով ձեռնարկվեցին համապետական շինարարական աշխատանքներ (ճանապարհներ, երկաթուղիներ, կամուրրջներ, ջրամբարներ, էլեկտրակայաններ), նոր տեխնոլոգիական գծերի ներդրում, խոպան հողերի յուրացում: Սովյալներին և տառապյալներին տրամադրվում էին նպաստ, ձրի սնունդ, օթևան: Եվ արդեն 1936 թվականին, կառավարության հավաստմամբ, ճգնաժամը հաղթահարվել էր: Չնայած պահպանողականների կատաղի դիմադրությանը՝ հասարակությունում սկսեց զորանալ լավատեսությունը և համախմբումը: Շաբաթը մեկ անգամ երկիրը սպասում էր իր նախագահի ռադիոելույթին՝ կատարվածի և կատարվելիքի մասին:

Շնորհիվ ռազմական մեծածավալ պատվերների՝ ամերիկյան տնտեսությունն ապրեց անօրինակ զարգացում ինչպես քանակական, այնպես էլ որակական՝ կոնսերվացված սննդի արտադրությունից մինչև նորագույն նավեր, ինքնաթիռներ, հրթիռներ և միջուկային զենք: Քայլ կատարվեց ամրագրելու ԱՄՆ-ի առաջատար աշխարհաքաղաքական դիրքը: «Հիշեցին» նախագահ Վուդրո Վիլսոնի գործը՝ նախաձեռնելով աշխարհում վերահաստատել օրենքը և արդարությունը, ազգերի իրավունքները և ազատությունը: Դրա արդյունքը դարձավ ՄԱԿ-ը, որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1945 թվականի հոկտեմբերի 24-ին:

Կայացման **չորրորդ շրջափուլը** պարառում է 1946-1991 թվականները: Հայտնի է իբրև **Սառը պատերազմի դարաշրջան**: Աշխարհաքաղաքական չափույթում դա հակոտնյա ռազմաքաղաքական համալիրների առճակատման ժամանակաշրջան էր՝ ժողովրդավարական Արևմուտքի և սոցիալիստական ճամբարի՝ առաջնորդյալ երկու գերտերությունների կողմից՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի: Ժամանակաշրջանի խորհրդանիշը **Բեռլինի պատը** դարձավ: Այս համատեքստում հույժ կարևորվում է **Մարշալի պլանը** (1947), որը միտված էր լայնածավալ տնտեսական ու տեխնիկական աջակցություն ցուցաբերելու պատերազմից հյուծված և ավերված Արևմտյան Եվրոպային: Կարևոր էր և պլանի աշխարհաքաղաքական չափույթը՝ կանխել խորհրդային ծավալապաշտությունը: Հարդյունս ամրապնդվեց ԱՄՆ-ի առանցքային դերակատարությունը՝ իբրև Արևմուտքի առաջատար ուժային կենտրոնի:

Մրցակցությունն ու պայքարը համակարգային էին՝ ընդգրկելով կյանքի ամենատարբեր տիրույթներ՝ սկսյալ նյութական արտադրությունից մինչև գիտություն, առօրեական կյանքից մինչև բարձր մշակույթ: Հընթացս՝ գիտատեխնիկական առաջադիմությունը վերաճեց

հետարդյունաբերականության, երբ արտադրության առաջնային նպատակ ճանաչվեցին գիտական և տեխնոլոգիական գաղափարները, հղացքներն ու տեսությունները։ Իսկ համակարգիչը դարձավ դրանց գեներացման և զագացման, ծավալման և տարածման ընդհանրական միջավայր։

Այս ամենն ավելի շիկացրեց երկու բևեռների մրցակցությունը՝ մոլորակի տարբեր ծագերից մինչև տիեզերք, կյանքի գաղափարախոսականացումից մինչև ծայրահեղ ռազմականացում։ Ձևավորվեցին հակոտնյա ռազմամիավորումներ՝ ՆԱՏՕ-ն և Վարշավյան միությունը, իրենց հարձակողական և պաշտպանական արդարացումներով և աննախադեպ ֆինանսավորմամբ։ Եվ հրահրվում էին լոկալ (բայց խիստ արյունալի) պատերազմներ՝ կորեական, վիետնամական, աֆղանական։ Նաև ճգնաժամեր, ապստամբություններ, լրտեսական գործողություններ։ Նաև՝ միջուկային պատերազմի շանտաժ։

Սակայն օգտագործելով իր ավանդական հակակշիռների համալիրը՝ ԱՄՆ-ը կարողացավ խուսափել այս մարտահրավերների առավել բացասական հետևանքներից։ Ավելին, նաև կարողացավ հաղթահարել ներհանրութային այլազան տարանջատումները։ Դրանցից ամենահրատապը ռասայական խտրականությունն էր, որը խաթարում էր «ներգաղթյալների հասարակության» միասնականությունը։ Պայքարի հերոսը Մարթին Լյութեր Քինգն էր՝ բողոքական հոգևորականը, որի գլխավորությամբ 1950-1960-ականներին հաղթահարվեց այս խոչընդոտը։ Վերացան ռասայական հետապնդումները, բայց երկիրն առերեսվեց ստորին խավերի աղքատության հիմնախնդրին։ Դա մեղմելու համար հաջորդող քսան տարիներին ներդրվեցին ֆինանսական աննախադեպ միջոցներ, որոնք կյանքի էին կոչվում տարբեր սոցիալական ծրագրերի և փաթեթների ձևով՝ աղքատախնամ, նպաստատու, կրթական, մասնագիտական և այլն։

Հարկավ, ծառացած հիմնախնդիրները շատ էին ու բազմապիսի, բայց պատմական փորձը հուշում էր, որ ԱՄՆ-ը առաջադիմում է, երբ առկա են ճգնաժամային իրավիճակներ։ Դրանք օգնում են գտնելու որոշումներ և մոտեցումներ ի պատասխան նոր և անսպասելի փորձություններին՝ սոցիալ-համակարգային, աշխարհաքաղաքական, քաղաքակրթական, բնակլիմայական։ Դրանց հանրագումարը դարձավ հաղթանակը սառը պատերազմում. ԽՍՀՄ-ը փլուզվեց՝ չդիմանալով տնտեսական և քաղաքական, ռազմական և գիտատեխնիկական, մշակութային և սոցիալ-հոգեբանական մրցակցությանը։ Ավարտվեց ԱՄՆ-ի պատմության հերթական կարևոր շրջափուլը, որի ականավոր կազմակերպիչներից հատկապես առանձնացնելի են Ջոն Ֆ. Քեննեդին և Ռոնալդ Վ. Ռեյգանը։

Սկսվեց պատմության մի նոր շրջափուլ, որն ԱՄՆ-ին տվեց (կամ պարտադրեց) աշխարհաքաղաքական միաբևեռության առաջնորդի դերակատարությունը։ Սա մեր օրերերն են՝ լի տարասեռ միտումներով, շարժերով, բախումներով, փլուզումներով և լոկալ պատերազմերով։ Ինչո՞վ կարդյունավորվեն դրանք. ուրվագծերը տակավին տարտամ են։ Ժամանակ է պետք, որ պատմանյութը դառնա պատմություն։ Այդուամենայնիվ, դասագիրքը լավատեսություն է պարունակում, որ ամերիկյան հանրույթն ունի ներուժ հաղթահարելու և այս պատմական մարտահրավերը [Kagan, 2012], [Brzezinski, 2012]։

Ամփոփում

Ներկայացվող դասագիրքն իր հատկագծերով և գաղափարներով, մեկնություններով և հղացքներով ընթերցողի առջև ծավալում է ԱՄՆ-ի պատմության համայնապատկերը՝ նրա էթնիկ, քաղաքական և քաղաքակրթական սկզբնավորումից մինչև մեր օրերը: Այն հույժ ուսանելի է, քանզի միասնական տրամաբանության տիրույթում միավորում է «այս նոր և աննախադեպ քաղաքակրթության» իմաստային հանգույցները և հնարավորություն տալիս ըմբռնելու նրա **պատմական դասը:** Հարկավ, առկա են ինչ-ինչ բացթողումներ, թերասացություններ և թյուրըմբռնումներ, որոնք, սակայն, չեն խաթարում դասագրքի ընդհանրական կառուցիկ պատկերը: Այն կարող է ուղենիշ դառնալ մեզանում ամերիկագիտության զարգացման ճանապարհին:

Դասագրքի համայնապատկերում ուրվագծվում է հեղինակի կերպարը: Նա օգտվել է նախ և առաջ արդի ամերիկյան հետազոտական և մանկավարժական մտքի ձեռքբերումներից: Դասագրքի պարագայում այլ կերպ չի լինում. այն «երկրորդային գրույթ» է, զի խնդիր ունի «նախնական գրույթներից» համաբերելու նորը: Ուրույն դիտողականությամբ Տիգրան Եփրեմյանը քաղել է ամերիկյան պատմության պատմանյութը, դասդասել, համակարգել և դրան հաղորդել միտում, նպատակ և հասկացում: Հեղինակը տիրապետում է արդի հումնահիտար կրթանքի տարբեր բնագավառներին՝ պատմություն, քաղաքագիտություն, տնտեսագիտություն, ընկերաբանություն, աշխարհաքաղաքականություն: Նաև հոգեբանություն և մանկավարժություն: Նրա համաբերած «երկրորդական գրույթը» փաստարկված է, տրամաբանական և ընդգրկուն՝ ազատ տարաբնույթ առասպելույթներից և կարծրատիպերից: Այստեղ նա ինքնուրույն է և ստեղծագործական, զի մտքի հակառակ հեռանկարում հայ ուսանողն է [և ընդհանրապես լայն հասարակությունը]՝ ապագա մտավորականը, որը պետք է ազգային պատմությունը հարաբերի համաշխարհային ամբողջին և հատկապես դրա առավել ցայտուն դրսևորումներին: Հենց այդպիսին է ԱՄՆ-ի պատմությունը:

Գրականության ցանկ

Bailyn, B. (1992). The Ideological Origins of the American Revolution. Cambridge: MA: Harvard University Press.

Brzezinski, Z. (2012). Strategic Vision: America and the Crisis of Global Power. New York: Basic Books.

Certeau, M. d. (1988, p. 45). The Writing of History /Translated by Tom Conley. New York: Columbia University Press .

de, C. M. (1988, p. 45). The Writing of History /Translated by Tom Conley. New York: Columbia University Press.

de, C. M. (1988, p. 45.). The Writing of History /Translated by Tom Conley. New York: Columbia University Press.

Huntington. (2004). Who Are We?: The Challenges to America's National Identity. New York: Simon & Schuster.

Kagan, R. (2012). The World America Made. New York: Alfred A. Knopf.

Lee P., U. H. (2004, p. 129-164). Theorizing Historical Consciousness, . Toronto : University of Toronto Press.
Seixas, P. (. (2004). Theorizing Historical Consciousness. Toronto: University of Toronto Press.
Wood. (2011). The Idea of America: Reflections on the Birth of the United States. New York; : Penguin Press.
Yep'remean T., AMN patmut'yun: dasagirk', YePH hratarakch'ut'yun, Yer., 2024. **[In Armenian].**